

րով հրատարակուած հայագիտական աշխատասիրութիւններն համար գործադրելէ թող մեր այս առաջարկութիւնը օտարօտի չեղեայ ընթերցողներն համար: Ամենահարուստ մատենադարաններն իսկ իրենց գրքերի մեծ մասը նուէր են ստանում: Մենք յիշեմք միայն մի դէպք, որ կցանկայինք օրինակ լինէր և հայ հատարակութեան համար: Ֆրանկ—պրուսական պատերազմի ժամանակ, երբ կործանուեցաւ Ստրասբուրգի մատենադարանը, ուսուցչապետ և մատենադարանապետ Բարակը մի հրաւեր ուղղեց գերմանական ժողովրդին՝ նուէրներով ծածկելու այդ մեծ կորուստը: Նորա հրաւերը արձագանք գտաւ բանիմաց հասարակութեան մէջ. հրատարակիչներ, հեղինակներ, հաստատութիւններ և մասնաւոր անձինք այնքան դրբեր ուղարկեցին, որ կարճ ժամանակի մէջ կարելի եղաւ օրինաւոր մատենադարան կազմել:

Մայր Աթոռում կեդրոնական մատենադարան կազմելու գաղափարը նոր չէ. մի քանի տարի առաջ հայ լրագրութեան էջերում հարց էր ծագած այդ մասին, յոյս ունինք որ այժմ աւելի եռանդով կաշակցէ նա այս գաղափարի իրագործման:

Սպասենք և յուսանք:

Գ. Վ. Յովսէփեան.

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ

Դեկտ. 27-ին անսպասելի կերպով լուր տարածուեցաւ ձեմարանում, թէ Հոգեւոր Տէրը իւր օրհնարեր այցելութեամբ կամենում է պատուել ձեմարանը և իւր ճանապարհորդութիւնից առաջ հայրական խրատներ ապա ձեմարանի սաներին: Տօներն պատճառով դադարած էին դասախօսութիւնները և ուսուցիչներ չկային ձեմարանում բոցի վարչութեան անդամներէ: Սակայն մի քանի բոպէում Վեհի այցելութեան լուրն օտանալուն ա՛ր ձեմարան հաւաքուեցան վարդապետ և

սպառ աշխարհական ու սուրբիչներէ մի քանիք և Հոգեւոր Տէրը: Հ. Տեւչի հետ Հանդիսարան առաջնորդեցին, ուր հաւաքուել էին աշակերտները: Հոգեւոր Տէրը հաճեց աշակերտներին այլ և այլ խրատներ ասել, յիշեցնելով Փրկչի ծննդեան օտնի մերձաւորութիւնը. իրիւ տկանատես Պաղեստինի սուրբ վայրերի և Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան ծննդեան օտնի հետ կապուած սովորութիւնների մասին տեղեկութիւններ յայտնեց: Ի վերջոյ օրհնեց ուսուցչական խումբն ու աշակերտութիւնը, յայտնելով, որ իւր հայրական խնամքը ձեմարանից անպակաս պիտի անէ, նոյն իսկ իւր բացակայութեան ժամանակ: Ապա հանդիսարանից դուրս գալով հաճեց Ն. Սրբութիւնը մի քանի բոպէ հանդստանալ Հ. Տեւչի տեղեկումի ուր հաւաքուած էր և ներկայ ուսուցիչների խումբը: Երգիչները Ս. Հայրապետի անուան նուիրուած և ժողովրդական երգեր էին երգում՝ զուրբ:

Ս. ՎԵՀԻ ԶԱՆԱՊԱՐ ՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ.

Դեկտ. 28-ին Հոգեւոր Տէրը Մայր Աթոռից Երևան գնաց, այնտեղից Սեան Սէրբասնորդապօլ և սպա կարևոր զործերի պատճառով Տփլիս ուղևորուելու համար: Հոգեւոր Տէրը մինչև կառք նսանքն առաջնորդեց ամբողջ միաբանութիւնը, իսկ ձեմարանի դարբասի առաջ փողոցի երկարութեամբ շարուած էին ձեմարանի աշակերտներն իրենց վերակացուներով, ներկայ ուսուցիչներով տեսչի Հ. օգնականի հետ: Ն. Սրբութեան մինչև Երևան ճանապարհ դրին Գարեգին Սաթուհեան, Աշոտ, Կարապետ, Եղնիկ և Գ. Յովսէփեան վարդապետները:

—Ապա Ն. Սրբութիւնը 29-ին Երևանից դուրս գալով՝ դիշերել է Սուխոյ — Գնտանուում և միւս օրը Ելինովկա հասել. Սեանի միաբանութիւնն այստեղ ընդ առաջել է իւր Հոգեւոր Տէրը և յաջող նաւարկութեամբ կղզին առաջնորդել: Զարեմմին Ն. Սրբութիւնն հաճել է անցնել Սեանում, միաբանութեան հետ: Այնտեղ երկու օր հանդստանալուց յետոյ Ն. Վեհութիւնը յունուարի 3-ին շարունակել է իւր ճանապարհը և 4-ին առաւօտեան

Ժամը 10-ին Ալեքսանդրապոլ մտել, փիճակի յաջորդը Արժ. Մատթեոս վարդապետ ընդառաջել էր ն. Արքուժեան մինչև Դիլիճան: Ճրագայրյի երեկոյան Ա. Հայրապետը իջել է Ա. Փրկիչ եկեղեցին, իսկ ջրօրհնաց աօնին մեծահասակները թափորով Ա. Ասատուածածին եկեղեցուց դնացել է Ա. Փրկիչ, որի դրան առաջ Յորդանան էր կանգնած: Ա. Հայրապետի ներկայութեան պատճառով բարեպաշտ ժողովրդի մի այնպիսի բազմութիւն էր հաւաքուել, որ շատ դժուար էր կարգ պահպանել, ժողովուրդն ի սրտէ ուրախ էր, որ ծննդեան մեծ աօնի ժամանակ փոյնելում էր իւր Հայրապետի ներկայութիւնը:

Ալեքսանդրապոլում մի քանի օր հանդիսանալուց յետոյ՝ ամսի 10-ին հաճել է ն. Արքուժեանը Տփլիս ուղևորուիլ. Կոյարանում Ա. Հայրապետին ընդունել է Առաջնորդը իւր հետ ունենալով Անանիա եպիսկոպոսը, Տ. Տ. Եփրեմ, Բաղարատ, Տիրացր, Կորիւն, Միքայել, Դիոնեսիոս, Յովհաննէս վարդապետները և բազմութիւ պատուաւոր քաղաքացիք: Ն. Արքուժեան ճանապարհին ուղեկցել են Տեառք Մատթեոս և Թովմա վարդապետները: Գաղաք մտած ժամանակ հնչում էին բոլոր եկեղեցիների զանգակները, իսկ վանքի դռնից քահանայական դասը թափորով Վեհին եկեղեցի առաջնորդից: Կարճ աղօթքից յետոյ՝ ն. Արքուժեանը առանձնացաւ իւր համար պատրաստուած սենեակները՝ հանդիսանալու:

Դեկտ. 31-ի երեկոյան տարեմտի կադանդին նախնի սովորութեան համաձայն ամբողջ միաբանութիւնը սեղանատուն էր հաւաքուած ուխտի ամբողջութեամբ նոր տարուն զինուորելու: Ա. Հայրապետի ներկայացուցիչ և Մինդի նախանգամ Տ. Արիստակէս Արքեպիսկոպոս Գաւթեանի հրամանով հանդիսին պատշաճ մի բանախօսութիւն արաւ ձեւարանի հայկաբանութեան ուսուցիչ Եզնիկ վարդապետ Գեանջեցեան: Արժանապատիւ Հայրը հակիրճ տեսութեամբ կենդանացրեց Մայր Աթոռի միաբանութեան պատմութիւնը ժ. զարում, շեշտեց այն տառապանքներն ու նեղութիւնները, որ մեր հայրերը կրել են

ժ. զարում առաջին տասնամիակներում և ապա նոցա հաւատարմութիւնն ու անձնութեան զոհը և բարեմաղթեց, որ ի. զարում նշանաբանը Էջմիածնի միաբանութեան համար ձշմորտ անձնութեան զաղափարը լինի որին կարօտ է այնքան մեր եկեղեցին: Ապա Գերապատիւ Արիստակէս Արքեպիսկոպոսը որպէս աւագ անդամ միաբանութեան և Սրբապետոյն Հայրապետի ներկայացուցիչ կենաց բաժակներ առաջարկեց Հ. Տիրոջ և միաբանութեան հաւատարմութեան համար: Գերապատիւ Մակար եպիսկոպոսը բնարան ընտրելով՝ ծառն արմատով է ծառ խնայողից առածը, առաջարկեց Հայ ժողովրդի արեւատութեան և բաղդաւորութեան համար ընտրել: Ի վերջոյ Արժ. Յուսէկ վարդապետը առաջարկեց Արիստակէս Արքեպիսկոպոսի կենացը: Միաբանութեան անդամներն հէնց սեղանատանը միմեանց կաղանկ շնորհաւորեցին և մի մի օրացոյց ստացան Արքագանի կողմից ի շնորհաւորութիւն նոր տարուայ:

Հոգեւոր Տիրոջ հրամանով այս տարի վանական կառավարութեան անդամ են նշանակուած Գերապատիւ Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունի և Տեառք Համապատգ, Գարեգին Սաթեմեան, Կարապետ, Եզնիկ և Եղիշ, վարդապետները: ձեւարանի և տպարանի ներկայացուցիչներն էլ կառավարութեան անդամ են նշանակուած, որպէս զի կարելի լինի բոլոր ծախսերը կեդրոնացնել և ընդհանուր խորհրդակցութեամբ կատարել:

Աւարտութեամբ կարող ենք աւետել, որ յառաջիկայ մարտից եւրոպական և հայ լեզուներով հայագիտական մի թերթ պլաի հրատարակուի Արիստ Գոցնես դր. Ֆինկի մեր միաբանակից Եզնիկ վարդապետ Գեանջեցեանի և ձեւարանի ուսուցիչ պ. Յ. Մանեղեանի խմբագրութեամբ: Յօդուածները կարող են լինել գերմաներէն, ֆրանսերէն, ռուսերէն, անգղիերէն և հայերէն: Բազմութիւ հայագէտ պրոֆեսորներ և հայ բանասէրներ խոստացել են մասնակցել իրենց աշ-

խառակցութեամբ: Տարեկան պէտք է 4 դիրք հրատարակուի 5 ր. բաժանորդացնով: Մեծ յոյս ունինք որ այս թերթը հայադիտական գրականութեան մէջ իւր պատուաւոր տեղը պիտի բռնէ: Ի սրտէ յաջողութիւն եւք ցանկանում եւ յանձնարարում մեր բանասերնէ ին:



ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԷ.

Ստեփաննէն մեր եկեղեցու այս գարու երկրորդ կիսի այն սպասաւորներէից մէկն էր որ համալսարանական ուսումը հոգեւորականի համար աւելորդ չսպլուծիւն չհամարեց, այլ ժողովրդին ծառայելու զաղափարով տողորուած՝ կրօնաւորի սրբին ստաւ. առաջին օրինակը առեւ էր Գրիգոր եպիսկոպոս Աղափրեան: Ինքան հետեւեցին Վահան փարպալեա Բաւտամեան եւ Խորէն Ստեփաննէ: Հանգուցեալը յայտնի է իւր մանկավարժական—գրական եւ հովուական—քարոզչական գործունէութեամբ. մանկավարժական—գրական գործունէութիւնն սկսել էր դեռ եւս աշխարհական ժամանակից, երբ 1862 թ. իւր ուսումը Մոսկուայի համալսարանի իրաւաբանական բաժնում աւարտելուց յետոյ՝ Թիֆլիս վերադարձաւ: Իրրե մանկավարժ երկար տարիներ այլ եւ այլ քաղաքներում ուսուցչական եւ տեսչական պաշտօն է վարել: Նախ Թիֆլիսի առաջին գիմնազիայի պատմութեան ուսուցիչ եւ Նորաշէնի եկեղեցու աղջկանց դպրոցի տեսուչ է եղել (հանգուցեալը իւր մանկավարժական գործունէութեան ժամանակ առանձին ուշադրութիւն էր դարձնում յատկապէս աղջկանց կրթութեան վերայ), ապա փանտկանութեան մէջ մանկուց յետոյ՝ 1872 թ. ժառանգաւորաց եւ Վարդաշատի դպրոցի մէջ. նոյն թուին յունիսի 3-ին նշանակուել է երեւանի

թեմական դպրանոցի տեսուչ, իսկ հետեւալ տարին՝ 1873 թ. յուլիսի 20-ին նոյն կոչմամբ նուշի: 1876 թ. Բագուի դպրոցների տեսուչ է նշանակուել, ուր գործել է մի քանի տարի նաեւ իրրե քարոզիչ: 1880 թ. իրրե առանձին շնորհ եւ վարձատրութիւն հանգուցեալ Գեորգ Գ. մեծագործ կաթողիկոսի կողմից ուղարկուել է Փարիզ եւ Զուիցերիա մանկավարժական գիտութեան եւ քարոզչական տրուեստի մէջ կատարելագործուելու: 1882 թ. հոկտ. 5-ին նշանակուել է Ախալցխայի տեսուչ:

Նորա գրական գործունէութիւնն էլ սերտ կապուած է մանկավարժական գործունէութեան հետ: Առաջին անգամ աշխատակցել է 1860 թուից «Հեւսիսային» միշե իսկ երբեմն ոտանաւորներ գրելով: Թիֆլիս վերադառնալուց յետոյ՝ 15 տարի նա հրատարակում էր «Հայկական Աշխարհ» վերջին տարիները շատ անկանոն, որ աւելի մանկավարժական թերթ էր, քան գրական: Իւր յոյուածներէ մէջ հանգուցեալը երբեմն կըբոս էր բայց ընդհանրապէս յայտնի էր որպէս անկեղծ բնուորութիւն: 1871 թ. յունիսի 18 ին Ս. Ստեփաննէ հրատարակեց իւր թերթի դադարումը բայց յետոյ դարձել շարունակեց: 1884 թ. նա հրատարակեց մի ուրիշ թերթի «Մանկավարժանոց» որ միայն երկու տարի տեւեց: Հանգուցեալը մանկավարժական յոյուածներով աշխատակցել է նաեւ «Արարատին»: Նորա գրական գործունէութեան զուլս գործոցը Մովսէս Խորենացու թարգմանութիւնն է հարուստ ծանօթութիւններով, այս թարգմանութիւնը թերթի թիւնից տղատ չէ, բայց ներելի է Խորենացու լեզուի գլուարութիւններն ալքի առաջ ունենալով. երկրորդ հրատարակութիւնը շատ աւելի մշակուած է, քան առաջինը, որ թարգմանչի բարեխղճութեան եւ աշխատասիրութեան պիտի վերագրել: Սուսերէնից թարգմանել է Ն. Տոլստոյի «Կրէյցերի Սոնատ»:

Հանգուցեալը պակաս արդիւնաւոր չէ եղել որպէս եկեղեցու պաշտօնեայ. վանք մտել է 1871 թ. Գեորգ Գ. Մեծագործ կաթողիկոսի ժամանակ՝ նախ որպէս կիսատարեաւագ եւ ապա 1872 թ. փետր. 20-ին սարկաւաղութեան